

ներ ձերոց քարեպաշտութեանց զգոհունակութիւն սրտի հանդերձ սիրալիր օրհնութեամբ :

Մաղթեմք յամենաքարճերէլոյն Աստուծոյ վարձատրել զքարեպաշտական գործս ձեր ընդապատիկ պարգևօք առատածիր շնորհաց իւրոց աստ եւ ի հանդերձելումն , այլ եւ աղօթս առնեմք առ Հանգուցիչն հոգւոց տէր Զրիատոս , զի զՀոգի քարեյիշատակ եղբօր ձերոյ եւ հաւօրէն հանգուցելոց քարեհամբաւ տոհմին Բուդաղեան հանգուցէ ի լոյս երեսաց իւրոց յանվախժան թագաւորութեան իւրում , ամէն :

„ Ողջ լերուք ի խնամս Տեառն զօրացեալք

ՄԱԿԱՐ ԿԱԹՈՒՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Հ.մ. 35

ի 18 յունվ. 1889 ամի Փրկչական
եւ թուականութեան մերում ՌՅԼԸ
ի Ս. Էջմիածին

Օրհնութեան կոնդակն ի 28 յունվարի հմ. 20 , գրութեանս հետ ուղարկելով Բագուայ գործակալին պատուիրեցի անձամբ յանձնել յարգոյ Բուդաղեան եղբարց ի մխիթարութիւն նոցա եւ ի բաւականութիւն , իսկ ստացման մասին յայտարարութեամբս ի նոյն թիւ հմ. 21 , յայտնեցի Վեհափառ Կաթողիկոսին ի միամտութիւն :



Իրջապէս 1887 թուին Սաղխանի վանքի շինութիւնը աւարտուեց եւ նոյեմբերի 8ին օծուեց , իսկ 1888ին սեպտ . բացուեց վանական դպրոցը : Բայց երբորդ բանը մնացել էր , այն է վանահօրն եւ ուսուցչաց համար բնակելու սենեակներ , վասն զի , մի յարմարաւոր տուն ու սենեակ չկար , որոյ մէջ հնար լինէր բնակուել :

Հին առաջնորդարանը՝ որոյ ճակատին Յօհան եպիսկոպոսի